

**Խորհրդի 2001 թվականի մայիսի 28-ի որոշում**

**Հսկման ենթակա նյութերի նմուշների փոխանցման մասին  
(2001/419/ԱՆԳ (Արդարադատություն և ներքին գործեր))**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական միության մասին համաձայնագիրը, մասնավորապես, դրա հոդվածներ 30, 31 և 34«2»«գ»-ն,

հաշվի առնելով Շվեդիայի Թագավորության նախաձեռնությունը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը<sup>1</sup>,

Քանի որ.

- 1) թմրամիջոցների անօրինական արտադրության և առևտրի դեմ պայքարն անդամ պետությունների իրավապահ ու արդարադատության մարմիններին մտահոգող ընդհանուր խնդիր է,
- 2) հանցագործությունների հետաքննության, նախաքննության և քրեական հետապնդման կամ նմուշների փորձաքննության նպատակով առգրավված՝ հսկման ենթակա նյութերի նմուշներն անդամ պետությունների մարմինների միջև օրինական կարգով փոխանցելու հնարավորությունը թույլ կտա բարձրացնել թմրամիջոցների անօրինական արտադրության և առևտրի դեմ պայքարի արդյունավետությունը,
- 3) ներկայումս անդամ պետությունների մարմինների միջև առգրավված՝ հսկման ենթակա թմրամիջոցների նմուշների փոխանցումը կարգավորող պարտադիր իրավական նորմեր գոյություն չունեն, ուստի անհրաժեշտ է Եվրոպական միության մակարդակով ստեղծել այնպիսի համակարգ, որը թույլ կտա օրինական կարգով իրականացնել այդպիսի նմուշների փոխանցումը: Այդպիսի համակարգը պետք է կիրառվի անդամ պետությունների միջև առգրավված՝ հսկման ենթակա նյութերի նմուշների բոլոր տեսակների փոխանցումների նկատմամբ: Փոխանցումը պետք է հիմնված լինի ուղարկող և ստացող անդամ պետությունների միջև կնքված համաձայնագրի վրա,
- 4) փոխանցումը պետք է իրականացվի այնպիսի ապահով եղանակով, որը կերաշխավորի փոխադրվող նմուշների հետ կապված չարաշահումների բացառումը,

ՈՐՈՇԵՑ.

**Հոդված 1**

<sup>1</sup> Եզրակացությունը տրված է 2001 թվականի մայիսի 4-ին (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

## **Նմուշների փոխանցման համակարգի ստեղծումը**

1. Սույն Որոշմամբ ստեղծվում է հսկման ենթակա նյութերի նմուշներն անդամ պետությունների միջև փոխանցելու համակարգ:
2. Հսկման ենթակա նյութերի նմուշների (այսուհետ՝ «նմուշներ») փոխանցումը համարվում է օրինական բոլոր անդամ պետություններում, եթե այն կատարվում է սույն Որոշմանը համապատասխան:

## **Հոդված 2**

### **Մահմանումներ**

Սույն Որոշման իմաստով, «հսկման ենթակա նյութեր» նշանակում է՝

ա) «Թմրամիջոցների մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1961 թվականի Միասնական կոնվենցիայի I կամ II հավելվածներում և 1972 թվականի արձանագրությամբ փոփոխված՝ այդ կոնվենցիայում նշված ցանկացած բնական կամ սինթետիկ նյութ:

բ) «Հոգեներգործուն նյութերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1971 թվականի կոնվենցիայի վերանայված I, II, III և IV հավելվածներում նշված ցանկացած նյութ:

գ) ցանկացած նյութ, որը ենթակա է հսկման՝ «Նոր սինթետիկ թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, ռիսկի գնահատման և հսկման մասին»<sup>2</sup> 1997 թվականի հունիսի 16-ի 97/396/ԱՆԳ Համատեղ ծրագրի հոդված 5«1»-ի համաձայն:

## **Հոդված 3**

### **Ազգային համակարգողները**

1. Սույն Որոշումը կիրարկելու նպատակով յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է ազգային համակարգող:
2. Նշանակված ազգային համակարգողների մասին տեղեկությունները, ներառյալ հետագա փոփոխությունները, պետք է հաղորդվեն Խորհրդի գլխավոր քարտուղարությանը, որն այդ տեղեկությունները հրապարակում է պաշտոնական տեղեկագրում:
3. Ազգային համակարգողները, անհրաժեշտության դեպքում, ազգային այլ համապատասխան մարմինների հետ համատեղ, սույն որոշման համաձայն համարվում են նմուշների փոխանցումը թույլատրող միակ մարմիններ՝ քրեական գործերով իրավական փոխօգնության մասին ընդունված համապատասխան դրույթներից անկախ:

---

<sup>2</sup> ՊՏ L 167, 25.06.1997 թ., էջ 1:

## Հողված 4

### Նմուշներ փոխանցելու համաձայնությունը և ստացման հաստատումը

1. Նմուշ ուղարկելու մտադրություն ունեցող անդամ պետության ազգային համակարգողը և այն անդամ պետության ազգային համակարգողը, որը պետք է ստանա նմուշը, նախքան փոխանցումը, պետք է համաձայնություն ձեռք բերեն փոխանցման շուրջ: Այդ նպատակով, նրանք պետք է օգտագործեն հավելվածում նշված Նմուշի փոխանցման ձևաթուղթը:
2. Եթե նմուշի փոխանցումը ներառում է մեկ այլ անդամ պետության (այսուհետ՝ տարանցիկ անդամ պետություն) տարածքով նմուշի տեղափոխում, ապա ուղարկող անդամ պետության ազգային համակարգողը տարանցիկ անդամ պետության ազգային համակարգողին տեղեկացնում է նախատեսված փոխանցման մասին: Այդ առումով, յուրաքանչյուր տարանցիկ անդամ պետություն, նախքան փոխանցումը, պետք է ստանա պատշաճ կերպով լրացված Նմուշի փոխանցման ձևաթղթի մեկ օրինակ:
3. Ստացող անդամ պետությունը նմուշի ստացման մասին տեղեկացնում է ուղարկող անդամ պետությանը:

## Հողված 5

### Փոխադրման եղանակները

1. Նմուշների փոխադրումը իրականացվում է ապահով եղանակով:
2. Ապահով են համարվում փոխադրման հետևյալ եղանակները՝
  - ա) փոխադրումը՝ ուղարկող կամ ստացող անդամ պետության իրավասու պաշտոնյայի կողմից.
  - բ) փոխադրումը սուրհանդակի կողմից.
  - գ) փոխադրումը դիվանագիտական պարկով.
  - դ) փոխադրումը պատվիրված (էքսպրես) փոստով:
3. Փոխադրման ողջ ընթացքում նմուշին պետք է կցված լինի նաև 4-րդ հոդվածում նշված՝ պատշաճ կերպով լրացված Նմուշի փոխանցման ձևաթուղթը:
4. Համապատասխան անդամ պետության իրավասու մարմինները չպետք է խոչընդոտեն կամ հետաձգեն որևէ փոխադրում, որին կցված է պատշաճ ձևով լրացված Նմուշի փոխանցման ձևաթուղթը, եթե չկան կասկածներ անօրինական փոխադրման մասին: Նմուշի փոխանցման ձևաթղթի իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում անդամ պետության ազգային համակարգողը, որը հետաձգում է փոխանցումը, պետք է խնդիրը պարզաբանելու նպատակով անհապաղ

կապ հաստատի Նմուշի փոխանցման ձևաթուղթը լրացնելու համար պատասխանատու անդամ պետության ազգային համակարգողի հետ:

5. Եթե, որպես փոխադրման եղանակ, ուղարկող կամ ստացող անդամ պետության պաշտոնյայի կողմից ընտրվել է փոխադրումը, ապա վերջինիս չպետք է թույլատրվի համազգեստ կրել: Բացի այդ, նա չպետք է փոխադրման հետ կապված գործնական որևէ քայլ ձեռնարկի, եթե դա հակասում է կիրառվող ներպետական օրենսդրությանը և չի համաձայնեցվել ուղարկող, տարանցիկ և ստացող անդամ պետությունների միջև: Օդային փոխադրման դեպքում կարելի է օգտվել միայն անդամ պետություններից որևէ մեկում գրանցված ավիաընկերություններից:

## **Հոդված 6**

### **Նմուշի քանակը և օգտագործումը**

1. Նմուշի քանակը չպետք է գերազանցի իրավապահ գործունեության և արդարադատության իրականացման կամ նմուշների հետազոտության համար անհրաժեշտ համարվող քանակը:

2. Ստացող անդամ պետությունում նմուշի օգտագործումը պետք է համաձայնեցվի ուղարկող և ստացող անդամ պետությունների միջև, այսինքն՝ նմուշները կարող են օգտագործվել հանցագործությունների հետաքննության, նախաքննության և քրեական հետապնդման կամ նմուշների փորձաքննության նպատակով:

## **Հոդված 7**

### **Գնահատում**

1. Սույն Որոշումը ենթակա է գնահատման Խորհրդի կողմից՝ սույն Որոշումն ուժի մեջ մտնելուց առնվազն երկու, սակայն ոչ ավելի, քան հինգ տարի հետո:

2. Գնահատման նպատակով յուրաքանչյուր ուղարկող անդամ պետության ազգային համակարգողն իր արխիվում պահպանում է վերջին հինգ տարիների ընթացքում սրամադրված Նմուշի փոխանցման յուրաքանչյուր ձևաթղթի մեկ օրինակ:

## **Հոդված 8**

### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հուլիսի 1-ից:

Կատարված է Բրյուսելում, 2001 թվականի մայիսի 28-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Թ. Բոդատյոմ

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՆՄՈՒՇԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ

Ա. Փաստաթղթի համարը (երկրի ծածկագիրը՝ գրված երկու տառով/տարեթիվը/հերթական համարը)

Բ. Նմուշը ուղարկելու համար պատասխանատու անդամ պետության ազգային համակարգողը

Բ.1. Անունը՝

Բ.2. Հասցեն՝

Բ.3. Կնիքը՝

Բ.4. Ստորագրությունը, օրը, ամիսը և տարին՝

Գ. Ուղարկող մարմինը, ստացող մարմինը և նմուշի նախատեսվող օգտագործումը ստացող անդամ պետությունում

Գ.1. Նմուշն ստեղծել է՝

Գ.1.1. Անվանումը՝

Գ.1.2. Հասցեն՝

Գ.2. Նմուշը ուղարկվում է՝

Գ.2.1. Անվանումը՝

Գ.2.2. Հասցեն՝

Գ.3. Նմուշը նախատեսվում է օգտագործել՝

ա) հանցագործությունների բացահայտման համար.

բ) հանցագործությունների քննության համար.

գ) հանցագործությունների վերաբերյալ քրեական հետապնդում իրականացնելու համար.

դ) դատական փորձաքննության համար.

ե) այլ օգտագործման համար:

Դ. Նմուշի տեսակը և քանակը

Դ.1. Նմուշի տեսակը հետևյալն է (նշել բաղադրությունը)՝

Դ.2. Նմուշի քանակը հետևյալն է (նշել ճշգրիտ քանակը, օրինակ՝ գրամ, հաբերի քանակը և այլն)

Ե. Օգտագործվող փոխադրամիջոցները և երթուղին

Ե.1. Կօգտագործվեն հետևյալ փոխադրամիջոցները՝

ա) փոխադրումը՝ ուղարկող կամ ստացող անդամ պետության իրավասու պաշտոնյայի կողմից.

բ) փոխադրումը սուրհանդակի կողմից.

գ) փոխադրումը դիվանագիտական պարկով.

դ) փոխադրումը պատվիրված (էքսպրես) փոստով.

Ե.2. Փոխադրումը կատարվելու է հետևյալ երթուղով (նշել երթուղու սկզբնակետը, վերջնական կետը և այդ երկու կետի միջև ընկած երթուղին)

Ե.3. Եթե փոխադրումը կատարվելու է ուղարկող կամ ստացող անդամ պետության իրավասու պաշտոնյայի կողմից, նշել նախատեսվող փոխադրամիջոցը (զնացք, մարդատար մեքենա և այլն)

Ե.4. Հոդված 4«2»-ի համաձայն տեղեկացվող անդամ պետությունների ազգային համակարգողները՝

Զ. Նմուշը ստացող ազգային համակարգողը

Զ.1. Անունը (անվանումը)

Զ.2. Հասցեն՝

Զ.3. Կնիքը՝

Զ.4. Ստորագրությունը, օրը, ամիսը և տարին՝